ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2026թ. թիվ 242-Ա

Ծ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 2)-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի ապրիլի 6-ի թիվ 223-Ա որոշումը և հաշվի առնելով Ծ.Սարգսյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ծովինար Սուրենի Սարգսյանին 2026 թվականի ապրիլի 15-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Ծ.Սարգսյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. ապրիլի 15
ք.Վանաձոր